ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՊԱԿՑՎԱԾ ՈՐՈՇԻՉ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

Ի տարբերություն զոդվածով կապակցված նախադասությունների, որոնք, շնորհիվ շաղկապներին և հարաբերական բառերի, արտահայտում են մտքի ամենատարբեր երանգները, բարդ նախադասության բաղադրիչ մասերի միջև եղած հարաբերությունները ավելի որոշակի և հստակ են դարձնում, շարահարությամբ կապակցված նախադասությունները համեմատաբար ավելի աղքատիկ են արտահայտում մտքի տարբեր երանգները և ավելի քիչ հստակությամբ են արտահայտում բարդ նախադասության բաղադրիչների հարաբերությունները:

Բայց այս տիպի կառույցները ավելի դիպուկություն և արտահայտչականություն են հաղորդում խոսքին, օգնում են մտքերի հակիրճ և ամփոփ արտահայտելուն[1]: Այդ իսկ պատճառով համեմատաբար քիչ են փոխակերպվում բառի կամ բառակապակցության:

Լեզվում այս երկու կաղապարները զուգահեռաբար գոյություն ունեն և հանդես են գալիս որպես շարահյուսական համանիշներ:

Շարահարությամբ կապակցված բարդ ստորադասական նախադասություններում հիմնական միտքը հաղորդում է գլխավոր նախադասությունը, իսկ ստորադաս նախադասությամբ բացատրում, լրացնում և վերջնականապես բնորոշում է այդ միտքը: Այս է պատճառը, որ հիմնականում գլխավոր նախադասությունը հանդես է գալիս պարզ համառոտ նախադասությամբ, իսկ ստորադասը ազատ կառուցվածք ունի (պարզ համառոտ, պարզ ընդարձակ, կարող է շարունակվել համատեքստի հաջորդ նախադասությունների մեջ, ինչպես նաև լինել մի ամբողջ պարբերույթ)[2]:

Շարահարությամբ կապակցված նախադասությունների գլխավոր և ստորադաս մասերի կապակցման գործում հիմնական դերը ինտոնացիան է կատարում, բայց սրան օժանդակում է գլխավոր նախադասության մեջ առկա ընդհանուր - անորոշ նշանակություն ունեցող բառը, որը կարոտ է բացահայտման:

---

[1] Տես *Ն. Պառնասյան*. Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, հ 2, Ե. 1964, էջ 18, 59

[2] Տես նույն տեղում, էջ 14, 63:

Երբ գլխավոր նախադասությունը ստորադասի հետ կապակցվում է շարահարությամբ, բացահայտում է որոշյալին ոչ թե որևէ հատկանիշը, այլ նրա էությունը. բացահայտում կամ նկարագրում է նրա բովանդակությունը[3]:

Այսպիսի կապակցությունները իրացվում են երկու կաղապարներով: Ստորև տանք դրանք և փորձենք փոխակերպել, եթե տարբերակը փոխակերպելի է:

ա) Գլխավոր նախադասության մեջ առկա է հարաբերյալ, որի նյութական բովանդակությունը բացահայտում է ստորադաս նախադասությունը: Այսպիսի կապակցություններում ստորադաս նախադասությունը արտահայտում է անուղղակի հարցում և սկսվում է երկբայական վերաբերականով[4] :

Օր.՝ Այդ պահից սկսած նրան զբաղեցնում էր *այդ միտքը. արդյոք կհաջողի իմանալ որևէ բան:*

Երբ թագավորը դեղնափայլ ոսկին նետեց նոր քանդած փոսը, նրանց սարսափեցրեց *այն մտածությունը. արդյոք մի ամբողջ ոսկի գցեց փոսի մեջ:*

Այսպիսի կապակցությունները չեն փոխակերպվում:

բ) Գլխավոր նախադասության մեջ կա որոշյալ, որը հանգամանալից բացահայտման կարիք է զգում: Այդ բացահայտումն էլ կատարվում է ստորադաս նախադասության միջոցով:

Օր՝ *Մարդ* կա՝ *մարդ ա, մարդ* կա՝ *զարդ ա* (ԱՂ):

Հարցականներ են Իմ արցունքները՝

Ես ինչու եկա, Ուր պիտի գնամ (ԱՊ):

Այսպիսի կապակցությունները չեն փոխակերպվում:

Ըստ որոշվող բառի բնույթի՝ այսպիսի կապակցությունները լինում են մի քանի տեսակի:

1. Գլխավոր նախադասության մեջ առկա է ընդհանուր - անորոշ նշանակություն ունեցող որևէ որոշյալ, որը բացահայտվելու, որոշվելու կարիք է զգում: Այդ որոշյալը կարող է արտահայտված լինել գոյականով, ասացական բայանունով կամ գոյականաբար գործածված բառով (*ունակություն, սովորություն, դժվարություն, նպատակ, թերություն, կոչ, խոսք, պատգամ, հրահանգ* և այլն): Ստորադաս նախադասությունը բացահայտում է այդ անդամի բովանդակությունը: Այսպիսի կապակցություններում որոշյալից առաջ կարող է դրվել *մի* դերանունը, որը ուժեղացնում է գլխավոր և ստորադաս նախադասությունների կապը:

Օր՝ Նա *մի սովորություն* ուներ. *երեկոները միշտ գնում էր գբոսանքի:*

---

[1] Տես նույն տեղում, էջ 72-73:

[4] Տես *Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան*, ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 303:

Սարսափազդու ձայնով նա *կոչ* արեց ժողովրդին. *պահպանել ժառանգված դարավոր ավանդույթները:*

Առաջին օրինակը, որտեղ որոշյալը գոյականով է արտահայտված, փոխակերպվում է:

Օր.՝ Նա *երեկոները միշտ զբոսանքի գնալու մի սովորություն* ուներ:

Երկրորդ օրինակը չի փոխակերպվում, որովհետև որոշյալը ասացական բայանուն է, իսկ ստորադաս նախադասությունը որոշյալի կոնկրետ բովանդակությունն է ներկայացնում:

2. Որոշյալը, բացի ստորադաս նախադասությունից, ունի նաև բառով արտահայտված որոշիչ, որը ցույց է տալիս որոշյալի որևէ հատկանիշը ընդհանուր - անորոշ ձևով և սպառիչ կերպով չի բացահայտում նրա բովանդակությունը: Բառով արտահայտված որոշչից առաջ կարող է հանդես գալ նաև *մի* անորոշ դերանունը, որն էլ ավելի է ընդգծում որոշյալի անորոշությունը և պահանջում է սպառիչ բացատրություն[5] :

Օր.՝ Նա *(մի) տարօրինակ թերություն* ուներ. չէր *լսում դիմացինին:*

Այսպիսի կառույցները, որոնք բացահայտում և նկարագրում են որոշյալի բովանդակությունը ընդհանրապես, փոխակերպվում են:

Օր.՝ Նա *դիմացինին չլսելու (մի) տարօրինակ թերություն ուներ:*

Իսկ եթե ստորադաս նախադասությունը բացահայտում է որոշյալի կոնկրետ բովանդակությունը, ապա այդօրինակ կառույցները փոխակերպվում են ոճական որոշակի անհարթությամբ:

Օր.՝ Անտառից հետո սկսվում էր գեղեցիկ տեսարանը. շուրջբոլորը չնաշխարհիկ ծաղիկներ էին աճում:

Անտառից հետո սկսվում էր *շուրջբոլորը գեղեցիկ ծաղիկներ աճող գեղեցիկ տեսարան:*

Երբ բառով արտահայտված որոշիչը ունենում է որոշակի ցուցական նշանակություն, այդ դեպքում մի անորոշ դերանուն չի կիրառվում:

Օր.՝ Նա ուներ *երկու նպատակ. նախ՝ կայանալ, երկրորդ՝ լավ ընտանիք ունենալ:*

Երիտասարդի առջև դրված էին *հետևյալ խնդիրները.առաջին՝ արագ հաղթահարել փորձությունը, երկրորդ՝ առաջինը մոտենալ նպատակակետին:*

Այսպիսի որոշիչները կարող են չսահմանափակվել ստորադաս նախադասություններով և շարունակվել համատեքստի մյուս նախադասություններում,

---

[5] Տես *Ն Պառնասյանի* նշվ. աշխ., էջ 75:

ինչպես նաև՝ ամբողջ պարբերության մեջ:[6] Այսպիսի կառույցները չեն փոխակերպվում: Երբ որոշյալի բառով արտահայտված որոշիչը որևէ ցուցական դերանուն է *(այդ, այդպիսի, նման* և այլն), այն մասամբ արդեն հայտնի է նախորդ համատեքստից: Այս դեպքում ստորադաս նախադասությունը միայն հավելյալ կերպով լրացնում և վերջնականապես բացահայտում է նրա բովանդակությունը:[7]

Օր.՝ Ինձ հուզում է *այդ միտքը, կկարողանա օտար հողում հանգստություն գտնել:*

Այսպիսի որոշիչները չեն փոխակերպվում:

3. Շարահարությամբ կապակցված բարդ ստորադասական նախադասության գլխավոր մասը կարող է լինել անվանական նախադասություն՝ բաղկացած բացահայտման կարիք զգացող բառակապակցությունից կամ բառից:

Օր.՝ Շատ *ուրախալի լուր. փոքրիկ Գաբրիելը փրկվել էր:*

Ծննդավայրս... Բարդիներն ի վեր՝
Սրբատաշ ու պարզ մի գանգակատուն,
Հողե տանիքներ ու հողե քիվեր,
Որոնցից դեռ տաք արև է կաթում (ՎՂ):

Այսպիսի որոշիչները չեն փոխակերպվում:

4. Ստորադաս նախադասությունը բացահայտում է որոշյալի ոչ թե բովանդակությունը, այլ նկարագրում է նրա որևէ հատկանիշ, նրա հետ կապված որևէ երևույթ կամ նրա կատարած որևէ գործողություն: Օր.՝ Հանկարծ տեսա *մի մոշահավ՝ քարին հանգիստ նստած էր:* Հիշում եմ մորս *դեմքը՝ մերթ ժպտում էր, մերթ ծիծաղում* : Այսպիսի որոշիչները փոխակերպվում են:

Օր.՝ Հանկարծ տեսա *քարին հանգիստ նստած մի մոշահավ:*

Հիշում եմ *մերթ ժպտացող, մերթ ծիծաղող մորս դեմքը:*

Նմանատիպ կառույցներում կան ստորադաս նախադասություններ, որոնցում առկա են *նա, այդ, այդպիսի* դերանունները: Այս դեպքում գլխավոր և ստորադաս նախադասությունների միջև եղած շարահյուսական կապը որոշակիորեն թուլանում է. նմանվում են միավորական հավելական կապակցության:[8]

Օր.՝ Դա *մի փոքրիկ գյուղ էր. այդպիսիները շատ կային տարածաշրջանում:*

Լինում է *մի հայ. գաղթելուց առաջ,*
Մի ծյուղ է կտրում նա խնձորենու,
Եվ կանաչ ծյուղն այդ, ձեռքին ցուպ արած,

---

[6] Տես N 2 հղումը:
[7] Տես նույն տեղում, էջ 76:
[8] Տես նույն տեղում, էջ 78:

Իր հին տան հուշի վրա է հենվում (ԳԷ):

Այսպիսի կառույցները չեն փոխակերպվում:

5. Այն բարդ նախադասությունները, որոնք ունեն հարցական հնչերանգ, իսկ ստորադաս նախադասությունը սկսվում է երկբայական վերաբերականով, ո՛չ հաստատում, ո՛չ էլ ժխտում է որոշյալի որևէ հատկանիշ, այլ արտահայտում է ճարտասանական ներքին հարցում:[9] Այսպիսի կառույցները չեն փոխակերպվում:

Օր.՝Բայց երիտասարդին անհանգստացնում էր *մի հարց՝ արդյո՞ք կկարողանա ժամանակին լուրը հասցնել իր տիրոջը:*

Շարահարությամբ կապակցված որոշիչ ստորադաս նախադասությունները լինում են առաջադաս և վերջադաս:

Որպես կանոն այն լինում է վերջադաս: Գլխավոր նախադասությունը վերջանում է որոշյալով, որին էլ հաջորդում է ստորադաս նախադասությունը:

Օր.՝ *Ծննդավայրս... Քարափ է ու կալ* (ԳԷ):

Գլխավոր նախադասության մեջ որոշյալի շարադասությունը կարող է նաև խախտվել. որոշյալի և ստորադաս նախադասության միջև կարող է մեկ կամ մի քանի բառ ընկնել:

Օր.՝ *Մարդ կա՝ ողբում է՝«ես այս ու՞ր ընկա...» (ՀՇ):*

Առաջադասի դեպքերը ավելի սակավ են հանդիպում, այն էլ մի շարք գոյականների առկայության դեպքում (*հարց, խնդիր, առաջադրանք* և այլն):[10]

Օր.՝ *Ամենադժվար և ամենանուրբ,*
Ամենադժնի, բայց ամենասուրբ...
Լոկ այս կռիվն է կռիվը վերջին (ՀՇ):

Այսպիսի կառույցներում որոշյալի բովանդակությունը որոշվում է նախորդ նախադասության մեջ, իսկ ստորադասը սկսվում է այս կամ այդ ցուցական դերանվամբ: Դերանվան առկայության պատճառով էլ այսպիսի կառույցները չեն փոխակերպվում:

Համառոտագրություններ

ԱՂ - Արամ Ղանալանյան
ԱՊ - Անահիտ Պարսամյան
Գէ - Գևորգ Էմին
ՀՇ - Հովհաննես Շիրազ
ՎԴ - Վահագն Դավթյան

---

[9] Տե՛ս *Ա. Պապոյան*, կախյալ շարահարության բարդ նախադասությունները արդի հայերենում, Ե., 1968, էջ 92-93:
[10] Տե՛ս *Ն. Պառնասյան*, նշվ. աշխ., էջ 79: